

ՏԱՍՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուրլ, կէս տարվանը 6 բուրլ: Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ». Կամ. Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆՎԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին Տեսութիւն. Կառավարչական կարգադրութիւններ. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Աւարիայից. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գեր. Ազարեանի Պատրիարքական բերթը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՐԳԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ

11) Չինուորագրական գաւառամասերը կազմելու ժամանակ, զիւղական հասարակութիւնները սչ մի դէպքում մասերի չեն բաժանուում:

12) Գաւառները մասերի բաժանելու ենթադրութեան կազմվել և զինուորակոչական կետեր որոշելը յանձնվում է առանձին յանձնաժողովի, որը կազմված պէտք է լինի ազնուականութեան գաւառական առաջնորդից, գաւառապետից, հաշտարար միջնորդից և գաւառական քաղաքի մի ընտանիքից, որին նշանակում է նահանգապետը: Այն տեղերում, որտեղ չը կան ազնուականութեան առաջնորդներ և հաշտարար միջնորդներ, դրանց փոխարինում են տեղացի պատուաւոր անձինքը: Իսկ քաղաքներում, որտեղ չեն մտցրված 1870 թ. յունիսի 16-ի քաղաքային կանոնադրութիւնը, քաղաքապետին փոխարինում է մի պատգամաւոր քաղաքի կողմից ընտրված: Այդ փոփոխութիւնները տեղի են ունենում նահանգապետի կարգադրութեամբ: Յիշեալ յանձնաժողովներին նախագահում են ազնուականութեան գաւառական առաջնորդները, իսկ որտեղ չը կան այդպիսիները, դրանց փոխարինում են գաւառապետները:

16) Անդրկովկասեան նահանգներում, Թէրքեան ու Կուբանի շրջաններում, զինուորագրական գաւառական ատեանը բաղկացած պէտք է լինի ազնուականութեան գաւառական առաջնորդից, գաւառապետից, հաշտարար միջնորդից ըստ որոշման նահանգապետի և մի սպայից ըստ որոշման զինուորական իշխանութեան: Ատեանին նախագահում է ազնուականութեան գաւառական առաջնորդը, իսկ որտեղ այդպիսիներ չը կայ, — գաւառապետը: Այն տեղերում, որտեղ չը կան հաշտարար միջնորդներ, նրանց փոխարինում են մի աստիճանաւոր ըստ որոշման նահանգապետի և տեղական բնիկներից երկու պատուաւոր անձինքը:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԳԵՐ ԱԶԱՐԵԱՆԻ ՊԱՏՐԻԱՐԿԱԿԱՆ ԲԵՐԹՈՂ

(Թարգմանութիւն տաճկական ընթացից)

Իմ երջանկութեան — Կրան 1) և արքայական երկիրներին մէջ ընակող հայ-կաթոլիկաց նախկին կաթոլիկոս և պատրիարք Հասուն է քէն տի ի նրաժամանակից յետոյ նրա տեղ ընտրված է նախկին կարգաց և սովորութեանց համեմատ պատրիարքական փոխանորդ Ազարեան Ստեփան Պետրոս է քէն տի 2), որոյ ընտրութիւնն իմ կողմից էլ հաստատուած է: Ազարեան կաթոլիկոս խնդրեց, որ իր պաշտօնին վերաբերեալ բարձրագոյն բերթը չնորոգուի: Հետեալ իմ բարձր միջնորդների Ժողովում արված որոշման և իմ արձուցի իրազէի համեմատ և համաձայն նախկին կանոնաց, արքայական զինանիցս տուի այս բերթը, որոյ ձևկարը զարդարված է արձուցի խաթ թ ո Վ Ս 3) և հրամայեցի, որ վերջիշեալ 4) Ազարեան Ստ. Պետրոս է քէնտիկն Կ. Պոլսոյ հայ-կաթոլիկաց պատրիարքութեան և Կիլիկիոյ կաթոլիկոսութեան տէր լինի. և եթէ իր ստորակարգեալ հասարակութեան կրօնական կանոնաց ընդ-

նոյնպէս ըստ որոշման նահանգապետի:

17) Թիֆլիսում պէտք է կազմվի առանձին զինուորագրական քաղաքային ատեան նախագահութեամբ քաղաքապետի, որը կազմված պէտք է լինի մի սպայից զինուորական իշխանութեան ուղղմամբ, մի աստիճանաւորից Թիֆլիսի ոստիկանապետի որոշմամբ և Թիֆլիսի քաղաքային վարչութեան երկու անդամներից իր ընտրութեամբ:

19) Անդրկովկասեան և Կուբանի ու Թէրքեան շրջանները այլազգի ազգաբնակչութեան ամեն կոչման անձինք հաշուում են զինուորակոչական գաւառամասերում համաձայն նրան, թէ որտեղ են գտնվում այն քաղաքները և զիւղերը, որտեղ նրանք մշակման ընակութիւն ունեն:

20) Կովկասում զինուորակոչական ցուցակները կազմվում են հետեւեալ կերպով. ա) զիւղական բնակիչներին կազմվում է առանձին յանձնաժողովներ ձեռքով, որը բաղկացած է լինում զիւղական տանուտէրից, զիւղի երկու ընակիչներից ըստ որոշման գաւառապետի և զիւղական քահանայից. այս յանձնաժողովները գտնվում են գաւառական ոստիկանութեան հսկողութեան և զիւղապետութեան ներքոյ. բ) մեջաններին և արհեստաւորներին քաղաքներում, որտեղ մտցրած է 1870 թ. քաղաքային կանոնադրութիւնը, — քաղաքային վարչութեան ձեռքով. գ) այնտեղ, որտեղ գոյութիւն ունեն քաղաքային հասարակութիւնների կողմից պատգամաւորներ հասարակութեան կողմից զինուորակոչական իշխանութիւններին կից, — այդ պատգամաւորներին ձեռքով յիշեալ իշխանութիւնների աջակցութեամբ: Մտացեալ կոչման անձանց զինուորակոչական ցուցակները կազմվում են տեղական ոստիկանութեան ձեռքով:

21) Անդրկովկասում և Թէրքի ու Կուբանի շրջաններում այլազգի ազգաբնակչութեամբ, իր-բնիկ հիմը զինուորակոչական ցուցակներ կազմելու համար ծառայում են ա) տեղեկութիւններ ծըն-նըդական վկայականից, բ) ընտանեկան ցուցակագրութիւնները և զ) անձնական յայտնութիւնները:

22) Անդրկովկասում և Թէրքեան ու Կուբանի շրջաններում այլազգի ազգաբնակչութեամբ, տարիքների վերաբերեալ ցուցմունքները տարածայնութիւններին ժամանակ, որը երևում է ծննդական վկայականի ու ընտանեկան ցուցակագրութեան կամ մի ուրիշ վկայագրի մէջ, տարիքը որոշվում է հետեւեալ կերպով. քրիստոնեաների համար ծննդական վկայականով իսկ ոչ-քրիստոնեաներին համար ընտանեկան ցուցակագրութեամբ կամ ուրիշ վկայագրերով, եթէ նրանց

ցուցմունքները ճշտութիւնը կապած չէ յարուցանում:

23) Անդրկովկասում և Թէրքեան ու Կուբանեան շրջաններում այլազգի ազգաբնակչութեամբ, տարիքը որոշվում է արտաքին տեղով. ա) քրիստոնեական դատարանի պատկանող անձանց համար այն դէպքում, եթէ տարիքը ցոյց է տրված միայն ընտանեկան ցուցակագրութեան մէջ և կապած կայ դէպի այդ ցուցմունքի ճշտութիւնը և բ) ոչ-քրիստոնեայ դատարանի պատկանող անձանց համար՝ բոլոր դէպքերում, երբ տարիքի մասին եղած վկայագրերի ճշտութիւնը, որոնց մէջ հաշուելով և ծննդականը, — կապած է չէ:

25) Այն անձինք, որոնք կը կամենան զինուորական ծառայութիւնը անցկացնել ոչ թէ այն գաւառամասերում, որտեղ գրված են, այլ մի ուրիշ մասում, պարտաւորվում են յայտարարել այդ մասին, ներկայացնելով հաստատութիւն իւրեանց իրաւունքի վերաբերութեամբ, զինուորագրական կանոնադրութեան 119 յօդ. հիման վրա, ոչ ուշ քան մայիսի մէկը այն թվականին, երբ ենթարկվում են զինուորակոչութեան: Գիւղական բնակիչները, մեջանները յայտարարում են այդ մասին, թէ իրանց ընտրած նոր գաւառամասի զիւղական և քաղաքային վարչութեանը և թէ այն գաւառամասի զիւղական և քաղաքային վարչութիւններին, որոնց մէջ իրանք գրուած են լինում. ուրիշ կոչման անձինք յայտարարում են այդ մասին թէ մէկ և թէ միւս գաւառամասերի տեղական ոստիկանութեանը:

26) Այն տեղերում, որտեղ չեն հաստատված վճարումային վարչութիւններ, այն հիւանդութիւնները, որոնք արգելում են ծառայութեան գալու համաձայն զինուորակոչութեան, հաստատվում է զիւղական տանուտէրի վկայագրով վաւերացված տեղական ոստիկանութեան ձեռքով:

27) Այն տեղերում, որտեղ գործում են լեռնային բանաւոր դատարանները, լիճակահանութեան մասնակցող այն անձինք, որոնք դատարարված են այդ դատարանների կողմից հասարակութիւնից ժամանակաւորապէս հեռացնելու, ենթարկվում են անյապող վկայութեան և նշանակվում են ծառայութեան զորքի մէջ. այդպիսի անձանց հասարակութիւնից հեռացնելու յետաձգվում է մինչև այն ժամանակ, երբ նոքա իսկական ծառայութիւնից կանցնեն պահեստի մէջ:

29) Հայտնութեան կամ հիւանդացի դրութեան պատճառով զիւղական կոչման անձանց աշխատանքի անընդունակութիւնը հաստատվում է զիւղական Ժողովների ձեռքով, որոնց այդպիսի վիճակները վաւերացվում են վճարումային վարչութիւններով կամ նոցա համապատասխան որոշումներով:

IV. Կովկասում զինուորագրութեան կանոնադրութիւնը գործադրելու, ի նկատի պէտք է ունենալ հետեւեալ ժամանակաւոր կանոնները:

1) Նոր հաւաքվող զինուորները, որոնք պատկանում են Թերքի և Կուբանի շրջանների ու Անդրկովկասի տեղական ազգաբնակչութեան, զինուորական միջնորդութեան կարգադրութեամբ տեղաւորվում են առանձին կազմակերպված զորագնդերի մէջ, որոնք պիտի գտնվեն Կովկասում Այն մարտը թիւը, որոնք պէտք է լինեն այդ զորագնդերը լրացնելու համար, — չը հաշուելով դրան պատկան ընդհանուր զինուորակոչութեան թումը, — որոշվում է յայտարարվում է միաժամանակ այս վերջինի հետ միասին, այն կանոնադրութեան 9 յօդ. մէջ ցոյց տուած կարգով:

2) Նախընթաց յօդուածում ցոյց տրված զորագնդերի մէջ լիճակով մասնակցող իսկական ծառայութեան ժամանակամիջոցը պիտի լինի, — մինչև նոր կարգադրութիւններ անհետը, երբ տարի, իսկ պահեստի մէջ հաշուելու ժամանակամիջոցը տասնեկուսուցուց տարի:

3) Կովկասի այն տեղերում, որտեղ անասնապահութիւնը կազմում է պարագմունքի գլխաւոր ճիւղը, թոյլ է տրվում յետաձգել, — առկայն ոչ աւելի քան մի տարով, — իսկական զինուորական ծառայութեան մէջ մասնակցող այն անձանց, որոնք անմիջապէս կառավարում են իրանց պատկանող տաւարի, այծերի և ոչխարների հոտերը: Կովկասի զանազան տեղերի համար անասնոցների ամենափոքր քանակութիւնը, որը իրաւունք է տալիս այդպիսի յետաձգութեան, որոշում է գլխաւոր կառավարչապետը:

4) Այն կանոնադրութեան 52 յօդուածին կըրցած առաջին ծանօթութիւնը, — որ թոյլ է տալիս այն մարտից զինուորական ծառայութեան մէջ մասնակցող, որոնք պատկանում են աւստրական, գործարանական կամ արդիւնաբերական հիմնարկութիւնները պահող ընտանիքներին, — չէ գործադրվում Կովկասում:

5) Այն կովկասցիներին, որոնք ընդունված են

դէմ և իմ բարձր տէրութեան (Թերքիոյ) կարգ ու օրինաց հակառակ չը գործէ, և չընկնանայ հակառակ այն պայմանաց, որը յիշված են 1296 ամի Ռէթիւլայի 16 թիւ իր նախորդ Հասուն է քէնտիկն չնորոգված բերթում և արձանագրված են իմ արքայական դրամում և կամ ինքնին կամ մովին չը հրաժարի, թող ցիկեան իր պաշտօնից չարձակվի:

Նրա պատրիարքութեան և կաթոլիկոսութեան հպատակ տեղերում, ինչքան որ մէր լսասա 5), եպիսկոպոս, վարդապետ, քահանայ, մայրապետ և կոյսեր և Ժողովուրդ կայ, մեծ և վաղը, բոլորն էլ ճանաչեն, որ նա իրենց պատրիարքն և կաթոլիկոսն է: Եւ պատրիարքական իշխանութեան վերաբերեալ ամեն գործում թող նրան զիմն և նրա օրինաւոր խօսքից զանցառու էլ լինին և ամենայն կերպով հնազանդելու ու հպատակելու թող ոչ ոք չը խառնուի նրա գործին, երբ նա իրենց ծիսին համաձայն մէրխասաներ, քահանաներ կարձակէ կամ կը նշանակէ:

Երբ հարկաւոր կը լինի մի նոր մէր լսասա նշանակել և այս մասին պատրիարքի կնիքով կնքված թագրի ներկայացվի, նորընտիր առաջնորդին էլ կը տրվի իմ բարձր բերթով: Այս մէր լսասաների և եպիսկոպոսների արձակման կամ աքսորման մասին եւ թէ վաւեր են, միւլէսարի քննարկի եւ քաջութիւններին 6) կողմից գանգատ ներ-

կայացվի, մինչև եւ որ պատրիարքի կողմից գործի ճշմարտութիւնը չը քննվի, նոցա այդ գանգատներին ուշադրու թիւն պէտք չէ դարձնել, եւ մինչև իսկ եթէ այդ մասին նախկին կամ վերջին թուականաւ, մի կերպի, Ֆէրման էլ զուր և կամ լինի, դարձեալ պէտք չէ ինչև համարվի և գործը ճշտութեամբ քննվելուց յետոյ միայն, ինչ որ հարկաւոր է այն ի գործ դրուի:

Երբ մէրխասաներից մին կ. Պոլսոյ գալու համար իր տեղը մի ուրիշ հոգեւորականին նշանակէ, ոչ ոք իրաւունք չունենայ խառնվելու: Նոյնպէս ոչ ոք իրաւունք չունենայ արգելել, որ պատրիարքն, եպիսկոպոսներն և քահանայք իրենց աներում, եկեղեցիներում և վանքերում պաշտօն կատարեն և այդ շէնքերին հարկաւոր եղած նորոգութիւններն անեն, իրենց մեռեալները ըստ սովորութեան թաղեն, և կամ իրենց այլ պաշտամունքը համարձակ կատարեն:

Պատրիարքը իր կնքով կնքած թագրերով կրօնական պաշտամանց վերաբերեալ ինչ որ խնդրէ, նրա խնդրից պիտի կատարվի:

Առանց բարձրագոյն հրամանի ոչ ոք իրաւունք չունի նոցա եկեղեցիներին և վանքերին քննութեան ենթարկել: Հին եկեղեցիներն մասնաւորաց սեպականութիւն չեն կարող դառնալ: Եկեղեցիներին և վանքերին կահարանային այլոց պարտքի փո-

խարէն զրաւ դնել և եթէ այդպիսի մի բան պատահի, չէրիաթի հիման վրա, պէտք է ետ առնել և յանձնել ըստ պատկանելոյն:

Հայ-կաթոլիկ հասարակութեան անդամների պատկազատութիւնը պատրիարքի կամ նրա փոխանորդների միջոցաւ պէտք է լինի, ուրիշները իրաւունք չունեն խառնվելու: Եթէ պատրիարքը պատժէ այն հոգեւորականներին, որոնք առանց պատրիարքի կամ նրա փոխանորդ եպիսկոպոսների հրամանին իրենց պաշտաման օրինաց հակառակ պատկ են կատարած, ոչ ոք չը խառնվի: Թէ այս պատկի վերաբերեալ և թէ կրօնական այլ հարցերում, եթէ երկու քրիստոնեայք վէճ ունենան, պատրիարքն կամ նրա փոխանորդներն պէտք է քննեն խնդրին. և եթէ ըստ իրենց հաւատաց, յիշեալ քրիստոնեաներին ըստ իրենց քերեկ կամ իրենց եկեղեցիներում նոցա բանադրեն, կաղնիները և նախընթաց (օրէնքի և չէրիաթի դատաւորները) իրաւունք չունեն խառնվելու: Այդ հասարակութեան անդամներն չեն կարող, ըստ իւրեանց կրօնից, կին արձակել կամ երկու կին առնել, ուստի եթէ պատահի մէկն, որ այդպէս վարվի, այն ժամանակ դրան պէտք է պատժել, ինչպէս որ հարկն է: Եւ եթէ իրենց արարողութեանց համեմատ պատկ չը կատարողներին մեռնիները քահանայք չը թաղեն, ոչ կաղնիներն և ոչ նախընթաց այդ մասին չը խառնվին:

Եթէ մի մէրխասա, եպիսկոպոս, քահանայ և

անցորդներ, ուղափոխներ, որոնց մեծագույն մասը
օտարականներ են, դէս ու դէն են նայում զար-
մանալի վիճակներ հաւերի նման կանուկ պատ-
կելու սովորութեանը վրայ: Բացի այս արտա-
սովոր մի քանի գիշերաչափի կրողները, մանա-
մանա յիշատակ հրապարակուած ոչ ոք չը կայ,
մի կատու անգամ չը կայ: Յանկարծ լուսնակա-
լայտը նշարել է տալիս եկեղեցւոյ աշտարակին
վրայ դրսի կողմից սպիտակ մի բան բարձրանալը:
Լաւ չէ նկատուած թէ քինջ բան է, ուրուական չէր
կարող լինել, ուրուականներն, ստուգելով, տե-
սիները դարերն անցած են: Բայց քինջ կարող
էր լինել, եթէ ոչ մի օտարտի ճանաչելի,
որչոյ համար կիրակոսի բուրբերն անգամ նշանա-
կութիւն չունին, կամ անգլիացի մի անձնասպան,
որ հատարակ ճանապարհով ինքնասպանութիւնը
անպատուութիւն համարելով ինքզինքը աշտարա-
կի ծայրից վայր դահալով զիտմամբ է բարձ-
րանում:

Փորձարկել անցորդները կանգ են առած, ա-
ն ու դողով սարսափով նայում են, օգնութեան
հասնել կարելի չէ: Աղաղակներ արձակելն, քինջ
կը ծառայէ, մինչդեռ սպիտակ ուրուականը բարձ-
րանում է շարունակ, այլ ևս մի տատակի չափ
է երևում:

Աշտարակի բարձրութիւնը 138 մետր է: 100
մետր բարձրութեան աստիճանը մեծ պատահա-
նորին տեղն է, ուր է նաև գիշերապահին սե-
նակալը: Երբ ուրուականը հասնում է մինչ պա-
տահանը, խեղճ պահպանը լեղակատառ է լի-
նում, աղաղակ բարձրացնելու էլ վախենում է,
թէ մի գուցէ ճնաշըջիլ լինի և ձայնիլը յանկարծ
զարթնելով վայր ընկնի: Պահպանը այս տագ-
նալին մէջ բաց է անում մի պարտի դրան-
չափ մեծ ահագին պատուհանը, և քինջ տեսնել,
բարձրացող ոչ ճնաշըջիլ է ոչ ինչ, այլ դար-
թուն և խեղճ գուլար մի մարդ, քաղաքավարու-
թեամբ պահպանին բարևում է, քինջտէս է, լա-
ն է, գիշերը քինջտէս անցկացրելը, ձեր ընկարանը
չառ գով պէտք է լինի, գիշեր բարի, ցտեսու-
թիւն ասելով կրկին շարունակում է բարձրանալը,
բայց պահպանը—թշուառական! Ո՛ր ևս բարձ-
րանում, քինջ ևս անում, բացականուծ է բոլորու-
վին յարուշ կրթած, իսկ նա—ձայնը կտրէ, պա-
տահանը փակէ, երթնել քամի փչում է, կը հի-
ւանդանաւ ասում և ծաղրում է և միանգամայն
բարձրանում է:

Այս միջոցին եկեղեցւոյ հրապարակի վրայ հե-
տաքըքը հեղինակ է աւելանում են: Գիշերա-
պահն ուստիանը եկեղեցին շրջապատել են: Աշ-
տարակի պահպանին հեռաթիւնի միջոցաւ անմի-
ջապէս արած աղաղակութեամբ վրայ մի խումբ
հրշէջ զինուորը շտապաւ հասած եկած են հրդեհի
ժամանակ մարդ աղատելու երկայնաձիգ սան-
գուղաներով (որոնց ամենը միմեանց կայցին,
աշտարակին կէսին չեն հասնել) բաղմամասն և-
լանելովներով, պարաններով, աղիչներով և այլն,
'ի միջի այլոց մեծ տարածութեամբ հաստ կտա-
վից առաններ են բերել, բաց են արել և չորս
անկիւններից բռնել են, որպէս զի եթէ մարդը
(ուրուական չը լինելը այլ ևս հասկացուցաւ)
վայր ընկնի, անմիջապէս աղատվի:

Ժամը մէկ և կէսն է, մարդը երևում է այժմ
աշտարակի ծայրը սրնանայ ոսկեկալ հողմացոյ-
ցի վրայ, հազիւ նշարվում է, մի բաներ է ա-
նում, երբում է, շարժվում է, բայց շատ փոքր,
հազիւ մի ճնշուկի մեծութեամբ: Ամենքն էլ
կարծում են որ մարդը խեղճ է և ողբերգութեան
լուծումը մերձ է, ինքզինքը վայր նետելու պատ-
րաստութիւններ է տեսնում կարծիւմ է, բայց
յանկարծ դժուարութեամբ նշարելի մի բան է
երևում, աշտարակին ծայրը մի դրօշակ սկսում է
տատանել, ծածանիլ և մարդը սկսում է վայր իջ-
նելու:

Հրշէջ զինուորը, ոստիկանը, և հետաքըքը
տեսնում են մարդուն իջնելը, և շունչ առնելու
վախենալով սարսուռ են թէ քինջ պիտի պատա-
հի, ուղղակի սաւաններն մէջ պիտի ընկնի թէ
աշտարակին կոթման անթիւ քանդակներին
զարնվելով հողոր կողոր պիտի լինի:

Մրանց և ոչ մի կը չէ լինում, սրանք իրանց
ենթարկութիւններովն են մնում, մարդը հան-
դարտ և հաստատ քայլերով, կարծես իր տանը
սանդուղաները լինէին, ձեռներով, արմուկնե-
րով բազուկներով ալ ու անեակ բռնելով իջ-
նում է, մերթ ծովում է, մերթ նստում է, մերթ
կամարակալ սլաններ վրայ հոգնութիւն է առնում
և հասնում է պահպանին պատահանին առա-
ջը,—ծարաւ եմ, ասում է այս վերջինին, խնդրեմ
մի բաժակ ջուր տո՛ւր, պահպանը—ուղղակի

վայր իջիր, այնպէս քիչ ջուր տուող շատ կը
գտնես, պատասխանում է:

Վայրը գտնվողները նշարում են մարդուն իջ-
նելու ընդհարումը և պահպանին հետ դէմ առ-
դէմ գալը, յետոյ վերադառնալուն են մարդուն
լինելը: Վերջ 'ի վերջոյ ակնատեսների արտա-
մաշ տաղանակները վերջանում են: Մարդը իջ-
նում է և մի քանի մետր մնացած բարձրութիւ-
նից մի ոտուով կանգնում է քաղաքատակի վը-
րա, ուր անմիջապէս ոստիկանը կայանաւորում
են իրան և տանում են ոստիկանատուն:

Բարձրանալը և իջնելը տեսած էր ընդամենը
երկու ժամ: Մարդը իջնելուց յետոյ կօշիկներն է
պտուռ, չէ դանում: Առածը արգարացի է ուրե-
մըն, շնորհի վրայ բարձրացողին կօշիկները գետ-
նի վրայ չեն մնար: ասում են, խեղճ մարդուն
էլ կօշիկները գողացել էին: Ինքը մտա քառա-
տուն տարեկան ամբակագմ մի մարդ, հագածը
սպիտակ կտուէ մի բաճկոն և նոր գոյնով մի
անդրակարտիք, ոտները բոբիկ:

Ոստիկանատան մէջ բանադրել են ուղում,
որպէս զի հետեւել առաւօտ ուշի ուշով ճննել
հարց ու փորձ անեն. մարդը սկսում է լալ, ա-
սում է հարցրէք մի անգամ թէ ինչի եմ բար-
ձրացել աշտարակի վրայ և ինչ եմ չինել: Այն
ժամանակ պարզվում է մի գեղեցական, դեղազ-
նական, մի անգամայն անձնագրութիւն:

Մարդուն անունն է Պիրեսէր, անվանը մի
գործարար, աշտարակների յարկաց և գաղաթաց
նորոգելի, որ յատկապէս հայրենիքից մարդա-
րակին ծայրը, կայսեր ծննդեան տարեթիւրն առ-
թիւ մի դրօշակ գետեզիւռ համար: Առանց բան-
տարկելու իսկոյն ազատ թողնում են մարդուն:

Հետեւել օրը օգոտտուի 18, կայսեր ծննդեան
տարեթիւրն օրը աշտարակին վրայ ծածանում է
Պիրեսէրը դրօշակը, կէսը ղեղին, կէսը ևս գոյնով
թէպէտ 6 մետր երկայնութիւն և 2 մետր լայ-
նութիւն ունի, հողը նշարվում է փոքրիկ մի
թշակինակի չափ: Կայսրը Gastein է գտնվում,
հետագրում են նորին վիճակագրութեան և աղբ
են անում եղբւրթիւնը: Թաղածառանգ իշխանը
լատիւն պէս, անմիջապէս կանչել տալիս է Պի-
րեսէրին, և ձեռքը սեղում է նորահարկութիւն
յայտնելով:

Պիրեսէրը ասում է, տէր իմ, ես պարտքս կա-
տարեցի, 'ի սէրն մեր սիրելի կայսեր դրօշակը
պարզեցի. եթէ աւելի բարձր մի աշտարակ դեռ-
նի, պատրաստ էի բարձրանալու: Թաղածառանգ
իշխանը շատ զո՛ւ է լինում և ուղարկում է Պիր-
եսէրին իր սենեկակատի միջոցաւ 200 գուլդէն
նուէր:

Կայսեր հօրեղբայր արշուղուս Ալբրէխտ, աւ-
տորիական ընդհանուր զօրաբանակների հրամա-
նատարը լսելով Պիրեսէրի գոհաբերութիւնը, ու-
ղարկում է 5 ոսկի գուլտա: Աղնականացի զու-
րը հանգանակում է 400 գուլդէն և ընծայում է
Պիրեսէրին: Ժողովրդական զօրավայրերի ճաշա-
րանասպաններից հրակերներ են գալիս Պիրեսէրին,
խեղճ մարդը շտապել է իր մէկին հրակերն ընդունի,
այնու հանդերձ կարգաւ գոհացնում է ամենքին:

Կարգապետը կարգաւ կանչում են, բերանացի
պատմածը իսկոյն հրատարակում են, լրագրի հա-
մարները ձեռքից ձեռք յարկտակում է ամբարձ-
րութեամբ խեղճ մարդուն քառ ընդ քարշ
քարշում են պատկերը հանելու: Աշտարակի վրայ
բարձրացող Պիրեսէրն է օրվայ հարցը, լուսապա-
կասելը ծախվում են հարգանքներով, բայց Պիր-
եսէրն էլ օգտվում է, իւրաքանչիւր լուսաճան և
լրագրակալների օրինակը վարձք է ստանում:
Ինքն էլ զարմանում է և ասում է, ես չէի կար-
ծիր որ այդքան աղմուկ կը յարուցանէ, այդքան
կը գնահատվի, այս արածս պարզ մի բան էր,
ես արդէն վարժված եմ գերութեամբ աշտարակ-
ների վրայ բարձրանալու: Ճշմարիտ էլ մինչև հի-
մայ 176 աշտարակների վրայ է բարձրացել, ա-
ռանց չարժուն լատսակերտի, կատուի նման
մազեղներով բարձրանում է:

10 տարի առաջ Բուդապէշտում բարձրացել է
մայր եկեղեցու աշտարակի վրայ և աւտորիական
մի դրօշակ է պարզել. բայց վարձատրութիւնը
Վիեննայի հետ բաղադրանքով բոլորովն հակա-
դարձ է եղել, որովհետև հոնգարական դրօշակ
ինչի չը պարզեցիր, անսպիտան: ասելով ան-
խնայ ծեծել են խեղճ մարդուն:

Պէտք է գիտնալ որ Պիրեսէրը կը կարգայ, մի
օր աշտարակից վայր է ընկել և ոտը կտորել է,
սա կաղ ոտով բարձրացաւ սը. Ստեփաննոսի աշ-
տարակի վրայ:

Մի քանի օրից յետոյ դրօշակը անգից հանելու
համար երկու գործարար գանգակատան ներսի
կողմի սանդուղաններից բարձրանալով 6 ժամ աշ-
խատեցին և դրօշակը հանեցին, մինչդեռ Պիրեսէրը
կաղ ոտով և դրսի կողմից առանց սանդուղտի,
միայն աշտարակի շանթարղելի երկաթեայ թե-
ւը մերթ ընդ մերթ ձեռքով բռնելով, երկու
ժամվայ մէջ բարձրացաւ և իջաւ: Դրօշակը որ
կայսեր անուան սկզբատառերը կը կրէ, քաղա-
քին պատմական թանգարանին նուիրեցին:

Շատերը առաջարկել են Պիրեսէրին որ ուղե-
ցոյցի պաշտօն վարէ Ալպեան լեռներում, իրան
յատուկ անվերականութեամբ մի օր հարուստ կա-
րող է լինել հարուստները լեռները գաղաթը
բարձրացնելով, պարկեշտ գործարարը մերթ էլ
ասելով թէ չես չեմ ցանկանար այլոց դժբաղ-
դութեանց ճանապարհ ցոյց տալ, իմ գործը աշ-
տարակն է, գոնէ մի նպատակ ունի, աշտարակի
կապարներից և կղմիտները ինձ համար սարերի
սառույցներից առաւել հաճելի են:

Կայսրը երբ Վիեննա վերադարձաւ, մի ոսկեայ
չղթայ և մի ոսկեայ ժամացոյց (400 գուլդէն
արժողութեամբ) նուիրեց Պիրեսէրին, շնորհակալու-
թիւն յայտնելով սորա գովելի ծառայութեան
համար:

Նուէր և փող մի քանի հազար գուլդէն հաւա-
քեց համակրելի գործարարը, մինչև այսօր մարդը
վերին և ստորին Աւտրիայի իր կողմը գնալ, ա-
մենուրեք պատուած և հիւրասիրում են և մի կօ-
պէլ չեն պահանջում:

Լրագիրը այս առթիւ շատ ծիծաղաշարժ է
սրամիտ բաղդատութիւններ արին, 'ի միջի այ-
լոց «Բիբերլիքին»: Այս վերջինը շինել է մի
պատկեր բուրձարակի սանձանագրութիւն, ուր տըր-
տուակտայր նստած է գահինից Ալեքսանդր իշ-
խանը: Պիրեսէրը դէմը կանգնած, ասում է,—Ասե-
մափայլ իշխան. մի տրտմիք, միթիթարկեցէք,
այսպէս և աշխարհը, ես էլ ձեր վիտեմութիւնից ա-
ռաւել բարձրացել էի, բայց այսու ամենայնիւ
չառ ցածր իմայ:»

ԽԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

Սրանից մի տարի առաջ Յիւրիլիս Կեղարար-
կան գիտութիւնների դասնիթաց աւարտեց մի
լեւոհի իւրեքիս Բէգանկայիս: Ռուսաստանում
նա ղիմեց թնչական գեղարտամենտին խնորե-
լով թոյլ տալ իրան քննութիւն տալ պի՞ օ իւ-
ր օր ի կուռն ստանալու համար: Այժմ «Kur.
Warsz.» լրագիրը հաղորդում է, որ Բէգանկա-
յեա ստացել է իր խնդրած իրաւունքը, և քնն-
նութիւն կը բռնի Կիւիլի համալսարանում: Եթէ
այդ բարեկէսն է, կը նշանակի Ռուսաստանում
կանանց համար անկախ աշխատանքի մի նոր աս-
պարէղ էլ է բացվում:

Փարիզի ոստիկանութեան պրեֆիկտը մի ա-
ռանձին գրութեամբ ինչոցեց փարիզի կանանց
որ 1835 թիւ, փետրվարի 12-ի օրէնքի հիման
վրայ, որը մինչև այժմ էլ կը գործառնու չէ կորց-
րել, արդեւելում է Ֆրանսիայում կանանց հազնել
տղամարդու շոր: Բացառութիւն են կազմում մի-
այն այն փոքրթիւ կանայք, որոնք դրա համար
առանձին թույլտուութիւն ունեն:

Բոլգարական հարցը շուտով բն իղ գուր-
բելի: Շուտով փարիզի թատրոններից մէկում
կը լսադարձվի մի նոր սյիէտա՝ «Les aventures
d'Alexandre» վերնագրով («Ալեքսանդրի արկած-
ները»): Պիեսայի հերոսը իշխան Ալեքսանդր Բա-
տեյնբերգն է: Պիեսան սկսվում է իշխանի գահըն-
կեց լինելուց և վերջանում է նրա հանդիմանող
կերպով Սօֆիայի մասնելով: Պիեսայի մէջ գոր-
ծում է մի բոլգարական Յովհաննա Դարի:

Մի ոմն Միդերնոյթ, ինչպէս երևում հրէայ,
մտադիր է Պետրոքոպոլում հիմնել զուարճութեան
տեղեր մանուկների համար: Դրաբերը կը յարմա-
րեցնի երեկայական հասակին: Զուարճութիւն-
ները երկուսի կը բաժանվին,—ցերեկվայ, շատ
փոքր մանուկների համար, և դիշերվայ,—աւելի
մեծերի համար:

Բերլինում այս տարի բացվում է մի առանձին
դպրոց, պետական գիտութիւններ կը հա-
մար, որոնք պէտք է պատրաստվեն ստորագծած
պաշտօնի անկէր պրոսական և առհասարակ
գերմանական պետական ծառայութեան համար:

Խոտախոտում այժմ շատ են խոտում մի ոմն
Սուկիլի մասին, որը, յայտնի բժիշկ Տաններին նը-
ման, պայմանաւորվել է երեսուն օր ոչինչ
չուտել: Սկսածներն 1-ին լրացաւ 14 օրը, որ
Սուկիլի ոչինչ չէ կերել: Բժիշկները ուշադրու-
թեամբ հետեւում են այդ վարձին: Սուկիլի խոտում
է միայն ջուր յայտնի քանակութեամբ: Մինչև
այժմ նա առողջ է:

Փարիզում օրերում քննվեցաւ Բլոյի գործը,
որը մի ժամանակ մեծ աղմուկ հանեց, և որը
մեղադրվում է մի մեռած կնոջ և մի մեռած աղ-
ջկայ դիակներ ընտարարելում: Բլոյ գերեզման
փորող է և ընտարարում էր այն դիակները, որ
բերվում էին գերեզմանատուն: Մեղադրվածը խոս-
տովանեց իր յանցանքը, և յայտնեց, որ ինքը
այդ արել է հարած ժամանակը:—Երապէտները
ցոյց տուցին որ Բլոյ որ և է հոգեկան հիւանդու-
թիւն չունի: Բլոյ դատապարտվեցաւ երկու տար-
վայ բանտարկութեան:

Դրեգդնում մի քանի հետաքրքիր փորձեր արե-
ցին ապակու գանգուածի հետ: Փորձ անողներին
աշողվեցաւ ապակուն տալ մետալի ամրութիւն:
Փորձում են այդպիսի ապակուց երկաթուղու
ընկներ պատրաստել:

«ՄՇԱԿ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍՍԱՅԻՆ ԴՈՐԾԱԿԱՍԻՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 սեպտեմբերի: «Правитель-
ственный Вестник» լրագիրը հաղորդում է, որ
աչքի առաջ ունենալով վերջին միջոցներում
Ռուսաստանի և իշխան Ալեքսանդրի կառավա-
րութեան մէջ ծագած ներկայ լարված յարաբերու-
թիւնները, ռուսաց դիպլոմատական գործակա-
լութիւնը Սօֆիայում չը փոխարկուի մի ուրիշով
բայց որովհետև Բոլգարիայում մտա օրերում
պատահած դէպքերի պատճառով հարկաւորվեց
այնտեղ ռուսաց ներկայացուցչութիւնը, որը վա-
յելէր հարկ եղած հեղինակութիւն, այս պատ-
ճառով Սօֆիայի ռուսաց դիպլոմատական գոր-
ծակալութեան ժամանակաւոր գործակալութիւնը
այժմ յանձնված է Վիեննայի ռուսաց պատերազ-
մական գործակալ գեներալ-մայոր բարոն Կաու-
բարսին, որը արդէն շատ անգամ ստացել է գոր-
ծակալական հրամանագրութիւններ Բալկան թե-
րակղզու զանազան կողմերում: Բարոն Կաու-
բարսը պէտք է ուսումնասիրի մանրամասնօրէն
Բոլգարիայի գործերը գրութիւնը և իր խորհուրդ-
ներով օգնի բոլգարներին ազատվել օրինաւոր
կերպով այն ճգնաժամից, որի մէջ գտնվում է
նրանց երկիրը:

ՍՕՅԻԱ, 5 սեպտեմբերի: Այս օրերում արե-
ւելա-րումէլիական զորքերը գնացին հայրենիք
բայց մի գոնղից, որը դեռ ևս մնում է այստեղ:
Ազգային ժողովը փոխառութեան հարցը յետա-
ձգեց. իշխան Ալեքսանդրի կառավարչի գնելու
մասին յայտնված է ժողովին, որ այդ պահան-
ջում է ազգային պատիւը: Կառավարը 2,500,000
Ֆրանկ է գնահատված:

ԲՈՒԽԱՐԱՅԱՍ, 5 սեպտեմբերի: Երէկ երէկոյան
Բրատսլայի վրայ, մինիստրների ժողովից դուրս
գաւու միջոցին ատրճանակ-արձակեց գրեմեկանա
Ալեքսանդրէսկո: Բրատսլայ միւրապրով չէ:

ՍՕՅԻԱ, 5 սեպտեմբերի: Խնամակալութեան
ճառին տուած պատասխանում ժողովը յայտնում
է համակրութիւն իշխանին: Իր գահից մեծահո-
գութեամբ հրաժարվելու համար և յոյս է յայտ-
նում, որ իշխանը իրան ղոհնուց յետոյ, Ռուսաս-
տանի հետ լաւ յարաբերութիւնները կը վերա-
կանգնեն և որ բոլոր բոլգարները կօղնեն կառ-
ւարկութեամբ ճգնաժամից ազատվելու: Երկայա-
ցուցիչները յայտնում են իրանց վստահութիւնը
խնամակալութեանը և յայտնում են չորհակալու-
թիւն ազգային ժողովի շուտալոյթ խորհրդի հա-
մար իշխան ընտրելու:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 սեպտեմբերի: «Journal de
St. Petersburg» դժուար է համարում հաստաձայ-
նեցնել Սօֆիայի ժողովի խնամակալութեան
տուած պատասխանը՝ այն ուղերձի հետ, որը ժո-
ղովը ուղղեց Թագաւոր Կայսրին, և այդ հակա-
սովիւնը բացատրում է ժողովի և նրա ղեկա-
վարների մէջ տիրապետող անկարգութիւններով:

Լրագիրը յոյս է յայտնում, որ գեներալ Կաու-
բարս իր խորհուրդներով զուրա կը բերի Բոլգա-
րիան այս ճգնաժամից: Երէկ Պետերբուրգ հա-
սաւ հաղորդակցութեան ճանապարհների միմիտ-
րը, և դուրս գնաց արդարադատութեան միմիտրու-
թեան կառավարչը: Թիւրքաց գեպանը Պետեր-
բուրգից կանչված է Պոլիս. երէկ երեկոյան նա
ուղեւորվեցաւ Պոլիս՝ Մովսէլայի և Օդէսայի վրա-
յով:

ՍՕՅԻԱ, 6 սեպտեմբերի: Ժողովի կողմից
խնամակալութեան ճառին տուած հաստատված
պատասխանը հաւանութիւն է տալիս Բոլգարիան
պատերազմական գործեան մէջ պահելու: Նախ-
կին իշխանի հրամանակ գործերը կարգի բերե-
լու վերաբերող օրինազիծ ընդունված է ժողով-
ի կողմից այն խնդրութեամբ, որ իշխանին
արվում է 2/2 միլիոն Ֆրանկ իր կալուածները

դիմանալու համար ժողովը երէկ վերջացրեց իր պարագմունքները: Հրատարակվեցաւ խնամակալութեան հրամանը, որը վերաբերում է այն ազգային մեծ ժողովի ընտրութիւններին, որը պէտք է ընտրի նոր իշխան. ընտրութիւնները տեղի կունենան երկու շաբաթից յետոյ: Բացի իշխան Ալեքսանդր Բատոնեբերդի անշարժ կալուածները գնելու օրէնքից, ժողովը հաւանութիւն տուց և 15 միլիոն ֆրանկի փոխառութեան օրէնքին: Ընտրողական օրէնքը փոփոխվեցաւ. կրկնաքուէ չի լինի, ընտրութիւնները կը վճռվին ձայների պարզ առաւելութեամբ: Այդ կարգը կը գործադրվի ազգային մեծ ժողովի առաջիկայ ընտրութիւնների ժամանակ:

ՍՕՅԻԱ, 7 սեպտեմբերի: Ընդունելով հինգաբարձի օրը ազգային ժողովի պատգամաւորութիւնը, որ ներկայացրեց Թագաւոր կայսրին ուղերձը, Ռուսաստանի ժամանակաւոր ներկայացուցիչը, Նեկլիբով ասել է որ կայսերական կառավարութիւնը, ամենից թանկ համարելով Բոլզարիայի մէջ կարգի և հանգստութեան պահպանութիւնը, չէ կարող մտքով անգամ անցկացնել իշխան Բատոնեբերդի Բոլզարիա վերադառնալու հնարաւորութիւնը, քանի որ նրա հեռանալը, ուսու կառավարութեան աչքում գրաւականներից մինն է երկրի հանգստութեան համար: Ընտրողը գրաւականը, աւելացրեց Նեկլիբով, նոյն իսկ ձեռք մէջն է. խոհեմութեամբ և չարաւորութեամբ դուր կարող էք առաջն առնել ձայն փոխանդներ: Չը մտաւաք, որ երկրի ներկայ կարգը զեռ ևս ստացած չէ օրինական ձեւակերպութիւնը կայսերական կառավարութեան աչքում: Բոլզարիական կառավարութիւնը կարող է ձեռք բերել օրինականութիւնը միակայն իր այժմեան կառավարութեան անդամների, ազգային ժողովի պատգամաւորների և լինելու մեծ ազգային ժողովի պատգամաւորների խոհեմութեամբ և անկողմնապահութեամբ միջոցով: Ռուսաստանը բոլոր կուսակցութիւններից բարձր է պահում իրան և չի հովանաւորի կուսակցութիւններից ոչ միին:

ՍՕՅԻԱ, 7 սեպտեմբերի: Երէկ դարձեալ կայացաւ ազգային ժողովի մի նիստ, պատերազմական խորհրդի անձնական կազմակերպութեան փոփոխութիւնը վերաբնեւոյ նպատակով: Այդ խորհրդի մէջ հարկաւոր անդամների բացակայութեան պատճառով, կարող են հրաւիրվել օֆիցերները ստորին աստիճանների իրանից յետոյ ժողովի այժմեան սէսիան փակվեցաւ: Նոյն օրը, պատգամաւորները մինիստրներին հետ միասին գնացին մայր-եկեղեցի, որտեղ մաղթանքներ կատարվեցան Բոլզարիայի և Արեւելեան-Բուսիլայի միութեան տարեգործի առիթով: Նոյն առիթով մաղթանքներ կատարվեցան երէկ և Ֆրիլաուօ-ուում: Ընտրութիւնները մեծ ժողովի համար նշանակված են սեպտեմբերի 29-ին:

ԺՈՒԻԹԵՎՈ, 7 սեպտեմբերի: Գատաստանական քննութիւնից յայտնվեցաւ որ կարավելով և Նեկիթօրով մասնակից են եղել օգոստոսի 9-ի յեղափոխութեան գործում: Ձիտուորական պրոկուրորը պահանջում է նրանց ձերբակալութիւնը և դատաստանի ենթարկվելը, նրանց գործակիցների հետ միասին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒԳԻ ԲՈՐՍՍ
Սեպտեմբերի 6-ին

Ռուսաց 1 ռուբլ Լժովսկի վրա արժէ	239/32	պէնս.
— — — — —	197 1/4	պֆ.
— — — — —	245	սանս.
Ռսկի — — — — —	8	ր. 48 կ
Մաքսային կուպոններ	165	> —
Արծաթ — — — — —	1	> 32
Բորսային դիսկոնտներ	4	> 60
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի	100	> 12 կ.
— — — — —	2-րդ	> 100
— — — — —	3-րդ	> 100
— — — — —	4-րդ	> 99
— — — — —	5-րդ	> 99
Արեւելեան 5% փոխառութ. 1-ին շրջ.	99	> 87
— — — — —	2-րդ	> 100
— — — — —	3-րդ	> 100
Ներքին 5% առաջին փոխառութ. 243	> —	
— — — — —	228	> —
5 1/2% րէնտա	104	> 75
Ռսկիայ րէնտա	185	> —
Նոր կոնսոլիդաց փոխառութիւն.	158	> —
5% փոխառական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ.	159	> 75
5 1/2% փոխառական թղթեր ինքնօժի կալուած. բանկի.	97	> —
6% փոխառակ. թղ. խարիօփի կալ. բան.	101	> 75
— — — — —	101	> 75
— — — — —	101	> 50
— — — — —	102	> 50
— — — — —	102	> 50

— — — — —	101	> —
— — — — —	101	> 25
— — — — —	101	> —
— — — — —	27 և 43	> 25
— — — — —	97	> 25
— — — — —	18 և 43	> 25
— — — — —	581	> —
Վ. օլժովսկո-կամսկի բանկի ակցիաները	581	> —
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	259	> —
Ռիբինսկ-Վ. օլժովսկի ընկ.	97	> 75
Ս. Պետերբուրգի քաղաքային օրլ-գայաներ.	95	> 50
Մոսկվայի քաղաք. օրլգայաներ	95	> 75
Օդէսայի — — — — —	94	> 75
Նոր երկաթուղային րէնտա	99	> 75
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրլ.	86	> 75
Պետական բանկի 6-րդ հրատարակութեան տոմսերը	99	> 87
Ս. Պետերբուրգի բորսայի արամալըրութիւնը հանդարտ է:		

ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐ

ԱՍԽԵՆՅԱՆ Ա. Ա. Որովհետեւ երկար ժամանակ չէինք տուում ձեր «Բաթումից Երուսաղէմ և վերադարձ» վերնագրով յօդուածը, անցարմար համարելով նրան «Մշակի» համար, այդ պատճառով դեռ ևս օգոստոսի 28-ին, համաձայն ձեր խնդրերին, վերադարձինք յիշեալ յօդուածը պ. կարգաւոր Պոլսուէանին, որ և տուց մեզ իր ստորագրութիւնը յօդուածի ստացման մասին:

ԱԼԷՔԱՆԴՐԱՊՈԼ. Ա. Պ. Ձեր խնդրքը աւելորդ ենք համարում ուղարկել պ. Ա-ին: Մենք զիտենք որ նա չէ կարող ոչոքին ընդունել իր տանը ոչ օրպէս իր երեխաների ուսուցիչ, ոչ էլ որ և է այլ պաշտօնով: Նա իր բնակարանում ոչ ոքին ապաստանել էլ չէ կարող, որովհետեւ ունի ուղիղ այնքան սենեակներ, որքան հարկաւոր են իրան, իր կնոջ, իր երեք երեխաների և մի ազգանուն համար:

ԹԻՖԼԻՍ. Բ. Հարցնում էք թէ արդեօք շարունակելու ենք «Մի տարի Ելէյցարայում», յօդուածի տպագրելը: Այո, շուտով շարունակելու ենք և եթէ մի առ ժամանակ ընդմիջեցինք այդ գրուածքի տպագրելը, դա նրա իր շատութեան պատճառով էր և օրպէս զի միջոց տանք և ուրիշների բանասիրականներին լոյս տեսնելու:

ԵՎԱՏԵՐԻՆՕԴԱՐ. Բ. Մ. Ձեր խնդրքին համաձայն տպագրելու չենք:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ



ԳՈՒՆԵԹԻ հայոց հոգևոր դպրոցի համար հարկաւոր է մի ուսուցիչ՝ այնպիսի մի անձն, որ դիտենայ նաև եկեղեցական կրթողութիւն. ցանկացողները թող ամենակարճ միջոցում դիմեն հոգաբարձութեան աւադ-անդամ և գործակալ Սարգիս քահանայ երկրեանցին պայմանների մասին:

ՀԱՐԿԱՌՈՐ Է ՄԵԿ ՀԱՇՈՒՊԱՂՆ՝ ԱՂԱՏԱՅԱ ԿՕՄՄԻՍԻՕՆԵՐԱԿԱՆ գրասենեակում պարագլուխ կանոնաւոր հաշուապահութեամբ և նամակագրութեամբ: Պայմանների համար դիմել այս հասցեով՝ Ակտաֆա, Մեցերյանց.

ՀՕԿՈԼԵՐ
Ս. ՄԻՈՒ և ԸՆԿ.
(Ո. 4857.) 29—50 (Կ)

Տիֆլիսի Գայանէ ՄԱՍԱԿԵԱՆ յայտնում է իր ազգականներին և ծանօթներին իր ամուսնու ՀԱՅԳ ՄԱՍԱԿԵԱՆԻ մահի մասին, որ վախճանվեցաւ Օրէնսայում ներկայ սեպտեմբեր ամսի 7-ին: 1—1

Կուկուլայի ՆՈՐԱՇԷՆ Ս. Աստուածածնայ եկեղեցու տղայոց ծխական դպրոցի հոգաբարձութիւնը յայտնում է, որ յիշեալ ուսումնարանում աշակերտների ընդունելութիւնը արդէն սկսված է ամսի 9-ից և կը շարունակվի մինչև 22-ը, առաւօտեան 8—12 ժամը: 1—2

ԿՈՒԿԻԱՅԻ ՍՐ. Աստուածածնայ եկեղեցու (Թանդոյեան) հայ օրիորդաց ծխական ուսումնարանը բացվում է սեպտեմբերի 8-ից, որի համար հոգաբարձութիւնը ծանուցանում է ի գիտութիւն հասարակութեան: 1—1

ԲԷԱԼԱԿԱՆ դպրոցում աւարտած ՈՒՍԱՆՈՂ կամեում է Թիֆլիսի ընտանիքներում ԳԱՍԵՐ ունենալ: Հասցէն թողնել «Մշակի» խմբագրատանը: 1—5

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Չ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր
Հ Ի Ն Գ Ե Ր ՈՐ Դ Տ Ա Ր Ի

Աւետարական կուրսերի նպատակն է մանագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ծանապարհով հմուտ հաշուապահներ:

Աւանդելի առակցք սքրա են՝ 1) Աւետարական հաստութիւն, 2) Աւետարական Թուրքաբնութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուրքաբնութիւն համարիչի վրա, 5) Աւետարական Թղթակցութիւն, 6) Աւետարական և մուրհակի կանոնադրութիւն, և 7) Գեղարուեստ:

Ուսումը սկսվում է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնները օգոստոսի 25-ից, ամենայն օր, երեկոյան 5-ից, մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում՝ ՍՈՂՈՎԿՈՒՄ, Լաբօրատորիայեա փողոցի վերայ, ՅՈՎՀԱՆԷՍ ՂՈՐԴԱՆԵԱՆԻ տանը, № 11: Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ՁՐԻԱՊԵՍ եղբ. Ծովհանոսիների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաբարձացիք զիմում ենկուրսերի հիմնողին՝ ՎԵՒ ՄԻՓԼԻՍԿ, Ս. Ս. ՄԱՆՍՅԱՆԿՍԿԻ:

12—15

Մամուլի տակից դուրս եկաւ Յ. Գ. Երզրէէէէէէէ և Մ. Պանճուլազէէէէէէէ
ԹՈՒՍԱՐԱՆԱԿԱՆ ԽՆԳԻՐՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ
առաջին մասը (ամբողջ թուր) ԵՐԿՐՈՐԻ ԲԱՐԵՓՈԹԵԱԼ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՄԲ: Գինն է 40 կոպէի վաճառվում է Կենտրոնական գրաքննադատարանում: Նոյն տեղում վաճառվում է և սորա ԵՐԿՐՈՐԻ ՄԱՍԸ (կոտորակներ) գինն է 45 կոպէի: Գումարով գնողներին զիմում կը լինի: 1—2

ԹԻՖԼԻՍԻ ԳԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
Երկրորդ անգամ ընդհանուր գիտութեանը, որ այս օրից սկսած ամենայն օր, առաւօտեան ժամի 9-ից մինչև 2 ժամը կէսօրից յետոյ, կարելի է անսնել 1887—1890 թ-ի քառամսակի ԳԱՂԱՔԱՅԻՆ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ անուանացուցակները: Այն անձինք, որոնք անկանոն կերպով են ներմուծված անուանացուցակներ մէջ, կամ բողոքով են բաց են թողնված, իրաւունք ունեն ներկայացնել վարչութեանը իրանց նկատողութիւնները, սկսած սեպտեմբերի 7-ից մինչև 21-ը: Այսպիսի նկատողութիւնները այնուհետեւ կը ներկայացվին Քաղաքային Գումարին: 3—3

Պատեւ ունեմ յայտնելու, որ ուսուցիչից հայերէն բառարանը օգոստոսի 10-ին յանձնվեցաւ արքայախնայ Բաթանորդարութիւնը շարունակելու է մինչև մարտի մէկը: Ստորագրվել ցանկացողները թող բարեհաճեն դիմել Թիֆլիսի պ. պ. Յակոբ Տիգրանեանցին, Մովսէս Թաւադեանցին, Գրիգոր Նահապետեանցին (ուսուցիչ) և Լևոն Մէլքե-Աղամանցին: Բազում պ. Ալեքսանդր Մերմանեանցին (Աւետար. բանկում): Ալեքսանդր Կարապետ Կարապետեանցին Ալեքսանդր Կարապետեանցին (5 րդ) միջառն ամսական մի մի բուրջի: Այսուհետեւ ինձ կարելի է դիմել հետևեալ հասցեով՝ Զրիվան Ինսպեկտուր Բարձրագոյն Գումարին Դոկտորու Աբեոլոմու Իոաննիսյանց:

Արիտողմ Յովհաննիսյանց 4—10

ԶԱԳՈՒՄԵՆԻ ԵՒ ԹԻԻԿԵԼԻ ՄԱՍՆԱԻՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ, ընկալական ուսումնարանների և զիմնագիտութեան շարունակելու շարունակելու է մինչև մարտի մէկը: Ստորագրվել ցանկացողները կը սկսվին սեպտեմբերի 1-ից: 5—5

ԱՌԱՅԻԱՅԻ Հայոց դպրոցների հոգաբարձութիւնը յայտարարում է, որ Ալալցեանցի Հայ օրիորդական դպրոցի համար հարկաւոր է մի վարժուհի ուսուցիչ լեզուի, շաբաթական 22 դաս, տարեկան 600 ռուբլի առձեռնով: Աւարտած պէտք է լինի զիմնագիտութեան ու թեթեւաբանութեան, լաւ վիճակով: Ցանկացողներին առաջարկվում է դիմել ուղղակի Ախալցիխ, Попечительству армянских училищ. 3—3

ԲԱՅԱՌԱՊԵՍ Պ. ԴԵՅԿԱՐԱՆՆԵՐԻ Խանութեան, Սոլոյակի փողոցի վրա, № 10, սկսած 1886 թ-ից, շատ չնչին գներով մաքրում են վարագործներ այնպէս լաւ, որ նորերից ոչնչով չեն զանազանվում: 5—6

АРМЯНСКАЯ ПОЭЗИЯ
въ лицѣ Рафаила Патканяна
Г. ЧАЛХУШЯНА
Продается въ Тифлисѣ, въ Центральной книжной Торговлѣ. Цѣна 50 к.
10—10
Գաղաղվում է և շուտով լոյս կը տեսնի Ս. Մանգրիէէէէէէէ աշխատասիրած ԹՈՒՍԱՑ ԼԵՂՈՒԻ ԳԱՍԱԿԻՐԸ: 3—3